Խմբագրություն 30-04-2019

ՈՍԿՈՒ ԳՐԱՎՈՎ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ

1. Ոսկյա իրերի գրավով վարկերի տրամադրման ձևեր
1.1 Կանխիկ կամ անկանխիկ (հաճախորդի՝ Բանկում բացված հաշվի միջոցով)՝ համաձայն սույն փաստաթղթի 3-րդ կետի
2. Գրավի արժեքի գնահատում
Ոսկյա իրերի գնահատումը իրականացվում է Բանկի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԲ կողմից ոսկու 1 գրամի համար սահմանված՝ գնահատմանը նախորդող ամսվա առնվազն վերջին աշխատանքային օրվա փոխարժեքը: **ԳԱ = ԿԲԳ * ՈՀ /999** Որտեղ՝ **ԳԱ** Համապատասխան հարգի 1 գ. ոսկու գնահատման առավելագույն արժեք, **ԿԲԳ** ՀՀ ԿԲ կողմից տվյալ օրվա սահմանված գին, 999 հարգի ոսկու 1գ.-ի համար, **ՈՀ** Ոսկու համապատասխան հարգ:
3. Կանխիկ կամ անկանխիկ եղանակով ոսկու գրավով վարկերի տրամադրման պայմաններ և սակագներ

Վարկի ժամկետ	Ոչ հավասարաչափ մարման գրաֆիկի դեպքում՝ 3 ամիս և 12 ամիս Հավասարաչափ մարման գրաֆիկի դեպքում՝ 24 ամիս
Վարկի արժույթ	ՀՀ դրամ
Վարկի գումար	100.000 – 3.000.000 ՀՀ դրամ
	Վարկի առավելագույն գումարը որոշվում է համաձայն հաճախորդի վարկային ռիսկի գնահատականի

Հաշվի սպասարկման լրացուցիչ վճար	**միանվագ (գանձվում է վարկի տրամադրման պահին)** ***12 ամիս և 24 ամիս ժամկետով վարկերի համար*** - **մինչև 200,000 ՀՀ դրամով վարկերի համար՝ 2,400 ՀՀ դրամ** - **200,001 ՀՀ դրամից 1,000,000 ՀՀ դրամ վարկերի համար՝ 4,800 ՀՀ դրամ** - **1,000,001 ՀՀ դրամից բարձր վարկերի համար՝ 9,600 ՀՀ դրամ** ***3 ամիս տոկոսների և հաշվի սպասարկման ամսական վճարների ամենամսյա վճարմամբ վարկերի համար՝*** - **1,2% վարկի գումարից, բայց ոչ ավել քան 12,000 դրամ** ***3 ամիս ժամկետի սկզբում միայն միանվագ միջնորդավճարի գանձմամբ վարկերի համար՝*** - **4.5% վարկի գումարից** **ամսական՝ պարտքի սկզբնական գումարի՝** **0.2%-ի չափով՝** հավասարաչափ մարման գրաֆիկի դեպքում **0.3%-ի չափով՝** ոչ հավասարաչափ մարման գրաֆիկի դեպքում **0%-ի չափով** ՝ ժամկետի սկզբում միայն միանվագ միջնորդավճարի գանձմամբ մարման գրաֆիկով վարկերի դեպքում
Տրամադրման եղանակ	կանխիկ և անկանխիկ (հաճախորդի՝ Բանկում բացված հաշվի միջոցով)
Մարման եղանակ	• տոկոսների և հաշվի սպասարկման ամսական վճարների ամենամսյա վճարում, մայր գումարի վճարում ժամկետի վերջում, • տոկոսների, հաշվի սպասարկման ամսական վճարների և մայր գումարի ամենամսյա վճարում
Վարկի տրամադրման ժամկետ	10 – 15 րոպե *(ներառյալ գրավի գնահատումը, փաստաթղթային ձևակերպումը և վարկի հատկացումը)*
Ժամկետանց պարտավորությունների մարում	Յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար հաշվարկվում է տույժ չմարված գումարի 0.13[1]%-ի չափով՝ սկսած կետանցի առաջին օրվանից: ***Ծանոթություն. Տոկոսագումարների և վարկի գումարի մարումները ժամանակին չկատարելու դեպքում գրավադրված և այլ գույքը (տունը, մեքենան, ոսկին կամ այլ) կարող է օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, իսկ վարկառուի մասին տեղեկատվությունը կգրանցվի վարկային ռեգիստրում: Վարկառուի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում գրավի հաշվին պարտավորությունները մարելու դեպքում գրավը բավարար չլինելու դեպքում հնարավոր է պարտավորությունների մարում վարկառուի այլ գույքի հաշվին:***
Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման օրինակ	Վարկի գումար՝ 500,000 ՀՀ դրամ տոկոսադրույք՝ 15%, ժամկետ՝ 24 ամիս,

[1] Նշված տոկոսադրույքը ենթակա է փոփոխման ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի փոփոխման դեպքում

(հավասարաչափ մարման գրաֆիկի դեպքում)	հաշվի սպասարկման լրացուցիչ վճար՝ միանվագ՝ 4800 ՀՀ դրամ, ամսական՝ վարկի գումարի 0.2% = 1,000 ՀՀ դրամ Տարեկան փաստացի տոկոսադրույքը կկազմի 22.19% (հաշվարկի եղանակը ներկայացված է ուղեցույցում)
Տարեկան անվանական տոկոսադրույք	**0% -** 3 ամիս ժամկետով, ժամկետի սկզբում միայն միանվագ միջնորդավճարի գանձմամբ, իսկ մայր գումարի վճարում ժամկետի վերջում գրաֆիկով վարկերի համար
	12% - 3 ամիս ժամկետով տոկոսների և հաշվի սպասարկման ամսական վճարների ամենամսյա վճարում, մայր գումարի վճարում ժամկետի վերջում գրաֆիկով վարկերի համար
	15% - 24 ամիս ժամկետով հավասարաչափ մարման գրաֆիկով, և 12 ամիս ժամկետով ոչ հավասարաչափ մարման գրաֆիկով վարկերի համար
Ուշադրություն՝ այս վարկի անվանական տոկոսադրույքը կարող է փոփոխվել Բանկի կողմից:*	
***Անկախ բանկի կողմից սահմանված սակագնի մեծությունից, վարկի (փոխառության) տարեկան փաստացի տոկոսադրույքը չի կարող գերազանցել ՀՀ ԿԲ կողմից սահմանված բանկային տոկասադրույքի կրկնապատիկը:**	
4. Ընդհանուր դրույթներ	
Տոկոսագումարների հաշվարկման կարգ	տոկոսադրույքը կիրառվում է վարկի նվազող մնացորդի վրա՝ ելնելով տարում 365 օրվա հաշվարկից (անուիտետային մարման գրաֆիկի դեպքում՝ 360 օրվա հաշվարկից)
ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՁԵՋ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ "ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑՈՒՄ":	
Վարկառուի նկարագիր	ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձ
Վարկավորման նպատակ	Սպառողական
Վարկի տրամադրման վերաբերյալ դրական որոշման կայացման չափանիշներ	• մշտական բնակության վայրի առկայություն • դրական կամ չեզոք վարկային պատմություն
Վարկի տրամադրման մերժման չափանիշներ	• հաճախորդի կողմից ոչ արժանահավատ տվյալների տրամադրում • վատ վարկային պատմություն
Անհրաժեշտ փաստաթղթեր	• անձը հաստատող փաստաթուղթ և/կամ սոցիալական քարտ
Գրավ	• ոսկյա իրեր (զարդեր, ջարդոն, ձուլակտորներ)՝ բացառությամբ սպիտակ ոսկու

Վարկ/Գրավ առավելագույն հարաբերակցություն	150% կանխիկ կամ անկանխիկ տրամադրվող վարկերի դեպքում՝ կախված հաճախորդի վարկային ռիսկի գնահատականից[2]
Գույքի ապահովագրություն	չի պահանջվում
Վարկի վաղաժամկետ մարում	տույժեր չեն կիրառվում

[2] 3 ամիս ժամկետով, ժամկետի սկզբում միայն միանվագ միջնորդավճարի գանձմամբ, իսկ մայր գումարի վճարում ժամկետի վերջում գրաֆիկով վարկերի համար վարկ/գրավ առավելագույն հարաբերակցությունը սահմանվում է 100%